

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԱՂԵՅՈՒՐ» ԱՄՍԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ

Անցյալ դարի 80-ական իվականներին հասարակական կյանքի ընդհանուր զարգացման պայմաններում նոր բովանդակություն և նոր ուղղություն էր հաղորդվում մատաղ սերնդի դաստիարակությանը: Նախկին ոխությանտիկական, միակողմանի, սահմանափակ կրթության քարացած դոգմաների փոխարեն, սուաջ էին քաշվում մանուկների հոգևոր ու մտավոր համակողմանի զարգացման խնդիրները: Պահանջվում էր պատրաստել կյանքը բազմակողմանիորեն ճանաչող, աշխատավոր լայն խավերի շահերն ու իրավունքները ստից, կեղծիքից և բռնությունից պաշտպանող, անձնազոհ սերունդ:

Ոչ թե վերացական գաղափարներ տարածելու, այլ գործնական կյանքում պիտանի սերունդ դաստիարակելու համար էին կոշված մանկական գրականությունը, մանկական մամուլը, մանկավարժությունը:

Մանուկներին ու պատանիներին կյանքի ճանաչողությամբ զինելը դառնում էր նորագույն մանկավարժության և սուաջադեմ հրապարակախոսության առաջնահերթ խնդիրը, որի իրագործման համար իսկ արևելահայ իրականությունում հրապարակախոսության ասպարեզ է իջնում «Աղբյուր» մանկա-պատանեկան ամսագիրը (1883—1918, Թիֆլիս): «Հասարակության պիտանի անդամ, պատվասեր, ճշմարտության նախանձախնդիր, շարության վրիժառու ժողովուրդ պատրաստելու համար պետք է սկսել նրա մանուկ սերնդից»¹: Այս նշանաբանով է իր գործունեությունը ծավալում արևելահայ մանուկների առաջին ամսագիրը (խմբագիր՝ Տիգրան Նազարյան):

«Աղբյուրը» առաջին հերթին ձեռնամուխ է լինում մանկական գեղարվեստական գրականության ստեղծմանը՝ որպես հիմք ընդունելով մատաղ սերնդի դաստիարակության և մանուկների ընթերցանության վերաբերյալ հաշտուր Աբովյանի, Ռաֆայել Պատկանյանի և մյուս դեմոկրատ մտածողների առաջադրած դրույթները:

Մանկական գրականությունը հանդիսանալով ընդհանուր գրականության անբաժանելի մասը, բնական է, որ պետք է զարգանար նույն ուղիներով, ինչ ընդհանուր գրականությունը: Ընդհանուր գրականության մեջ գերակշռող թեմա է դառնում ժողովրդի սոցիալ-կենցաղային կյանքը: Գրողից, արվեստագետից պահանջվում է ճշմարտացիորեն պատկերել իրական կյանքը: Այսպես, օրինակ, «Մշակ» թերթը իր խմբագրական հոդվածներից մեկում գրում է. «Մշակը» իր ուժին չափ պիտի աշխատի մեր գրադեղների ուշադրությունը դարձնել կենսական խնդիրների վրա, երևակայական աշխարհից իրական աշխարհը իջեցնելով նրան...»²: Նույն պահանջը դրվելով և մանկական գրողի առջև, «Աղբյուր» ամսագիրը գրում է. «Մի՛ կեղծեք մանուկների առաջ, ցույց տվեցեք նրանց կյանքի և՛ փշերը, և՛ վարդերը, միայն ասածների մեջ լինի ճշմարտություն»³:

Մանկական գրողի առջև խնդիր է դրվում՝ բարձրացնել մանուկների ու պատանիների մոտ սովորյալն արժանապատիության զգացումը, դաստիարակել նրանց ժողովրդասիրության, մարդասիրության բարձր ու վեհ գիացումներով, սովորեցնել պայքարել ինչպես իր, այնպես էլ այլ ժողովուրդների արդարացի իրավունքները ոտնահարողների դեմ, պաշտպանել ճշմարտությունը, մարդկայնությունը:

«Աղբյուրը» անդրադառնալով մանկական գեղարվեստական գրականության դաստիարակչական հարցերին, գտնում է, որ մանկական գրվածքը հեռու պետք է լինի «կրոնական ձգտումներից» և «չպիտք է կրի նեղ բարոյական ուղղություն»:

¹ «Աղբյուր», 1883, № 1, «Բ» բաժին, էջ 1:

² «Մշակ», 1872, № 4, էջ 1:

³ «Աղբյուր», 1884, № 3, «Բ» բաժին, էջ 3:

Ամսագրում մերժվում են մերկապարանոց բարոյա-խրատական սենտենցիաները: «Ուզում եք զրգել մանուկներին զեպի աշխատասիրություն,—զրված է ամսագրում—ցույց տվեցեք նրանց աշխատանքը գործողության մեջ իր հետեանքներով, առանց ծածկելու մանուկների առաջ և այն հառաչանքները, որոնք հաճախ զուրս են թույլում աշխատողների կրծքից...»⁴:

Ամսագիրը անդրադառնում է նաև մանկական գրականության լեզվա-ոճական հարցերին: Մանկական գրվածքի համար նախընտրելով Ղազարոս Աղայանի գրվածքների լեզուն, ամսագիրը գրում է. «Այո, պ. Աղայանցը, ունի իր լեզուն, մանկական լեզուն, որ Առաված պարզելի է նրան հատկապես մանուկների հետ խոսելու համար, թեև մեծերն ևս ամենայն հաճությամբ կլսեն միևնույն լեզուն: Դա մի շինծու, ստեղծված լեզու չէ, ինչ լեզվով պատվելի դաստիարակներից շատերը իրենց փոքր սանիկների հետ խոսելու միջոցին գործածելու սովորություն ունեն, միամտաբար կարծելով, որ կոտրատելով, աղավաղելով մեծերի լեզուն կարելի է ավելի հասկանալի դառնալ մանուկներին»:

«Աղբյուր» ամսագրում «Մատենախոսություն» ընդհանուր վերնագրի տակ տպագրվում են գրախոսական հոդվածներ, որոնցում բարձր են գնահատվում խաչատուր Արուսեանի, Ռաֆայել Պատկանյանի, Միքայել Նալբանդյանի, Հովհաննես Թումանյանի, Պերճ Պողոսյանի, Մերենցի (Հովսեփ Շիրմանյան) և ուրիշների ստեղծագործությունները: «Արուսեանի Աղասին,—զրված է այնտեղ,—նոր շունչ մտքից հայերի մեջ, առաջին դարկը տվեց հայ գրականությանը»:

Միքայել Նալբանդյանն ամսագրում իրավամբ համարվում է «Հյուսիսափայլ»-ի «լուսաշող փայլը», «գրական կյանքի մեջ շարժում առաջ բերող ոգի»: Ամսագիրը Նալբանդյանի ձերբակալման հիմնական պատճառը համարում է Ռուսաստանից հայածված ազատամիտ գործիչներ Գերցենի և այլոց հետ ունեցած զաղափարական ու անձնական կապը: Նալբանդյանը գնահատվում է որպես «...անզրդվելի մի համոզմունքի, անսպարտելի հոգևոր ուժի տեր, որպես մի լավ աշխարհայացքով մեծ հայրենասեր»: Միքայել Նալբանդյանի հասցեին ուղղված գրվածքների խոսքը ավարտվում է այսպես. «Փառք, հավերժ հիշատակ, մեծ հայրենասերին, հայոց եկեղեցու քաջ ախոյանին, ազատության երգչին, լուսավորության լույս քարոզչին»⁵:

«Աղբյուր» ամսագիրը ժամանակի գրական այն օրգանն էր, որը խրախուսում էր հայ գրողների գրական առաջին քայլերը: 1887 թվականին, երբ Մոսկվայում լույս է տեսնում Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն, «Աղբյուրը» հանդես է գալիս այդ ժողովածուի գնահատմամբ՝ տպագրելով Ղազարոս Աղայանի և Սեդրակ Մանգինյանի գրախոսականները: Աղայանը հանձին Հովհաննիսյանի, տեսնում է մի նոր բանաստեղծի, որը ժամանակի նոր պայմանների ծնունդն է, որը բարձրացնում է բանաստեղծի կոչումը, ծառայեցնում բանաստեղծությունը ժողովրդի իդձերի ու ցանկությունների իրագործմանը, նրա օվշտերի ու ցավերի ամոքմանը»:

«Աղբյուր»-ում է առաջին անգամ տպագրվում Հովհաննես Թումանյանի «Արև և Լուսին» լեզնեղը: Թումանյանն իր հորելյանական խոսքում երախտադիտության խոսք է ասում ամսագրի և նրա խմբագրի հասցեին. «Դեռ Մոսկվայի իմ առաջին ժողովածուն զուրս չեկած՝ առաջին անգամ իմ բանաստեղծությունները տպվել են «Աղբյուրում»: Նրբ ևս զեռ անհայտ մի պատանի էի, պ. Տիգրան Նազարյանը որոնում էր ինձ և ինձ պեռներին և մեր երկերը տպագրելով «Աղբյուրում», խրախուսում էր մեզ»⁶:

«Աղբյուրի» միջոցով են ժամանակին մատաղ սերնդի մեջ լայն տարածում դտել Ղազարոս Աղայանի բանաստեղծությունները, հեքիաթները, գրույցները, առակները, հանելուկները և այլն: Հանձին «Աղբյուրի», գրական գործունեության լայն ասպարեղ է բացվում Աղայանի համար:

Որոշ Աղայանի և մանկավարժ Աղայանի հայացքները գուցորդվում են նրա մանկական ստեղծագործություններում: Նա մանուկների համար ստեղծում է իրականությունն ու ժամանակը բաղմակողմաճիորեն ընդգրկող զեղարվեստական գործեր, դաստիարակելով մանուկների ու պատանիների մեջ լավագույն կյանքի համար պայքարելու համառ կամք ու պատրաստակամություն:

Առաջին անգամ «Աղբյուրում» է տպագրվում ցարիզմի լծի տակ տառապող ժողովուրդների հայածական կյանքը պատկերող և ցարիզմի զեռ ուղղված մանուկներին հասցեագրված նրա

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 25:

⁶ «Աղբյուր», 1916, № 4—5, էջ 106:

⁷ «Տարագ», 1919, № 12, էջ 84:

«Ստանամանիք»⁸ բանաստեղծությունը: Հայ ժողովրդի սոցիալական, կուլտուրական, լուսավորական կյանքի խնդիրները հուղում են բանաստեղծին: Նա տարբեր առիթներով այդ հարցերին անդրադառնում է մանուկներին հասցեագրած իր թե՛ բանաստեղծություններում, թե՛ պատմըվածքներում: 1885 թ. հայկական դպրոցների փակման առթիվ Աղայանը գրում է իր «Հիշողություն»⁹ բանաստեղծությունը, որը առաջին անգամ զարձալ տպագրվում է «Աղբյուրում»:

Այն ունի ինչպես պատմա-ճանաչողական, այնպես էլ բարոյա-դաստիարակական արժեք: Աշխատավոր ժողովրդի կյանքին, կենցաղին, նրա հոգսերով լի առօրյային մանուկներին ծանոթացնելու նպատակով, Աղայանը օգտագործում է ժողովրդական երգի մոտիվները («Ճախարակ» և այլն):

Հարադատ մնալով մանկական գրականության համար առաջադրված այն դրույթին, թե մանուկների ու պատանիների հետ կարելի է խոսել ամեն ինչի, դիցուք սիրո մասին, միայն մատուցման ձևերի մեջ պահպանելով որոշակի պարզություն, ամսագիրը տպագրում է Ղազարոս Աղայանի «Տորթ Անգեղ և Հայկանուշ գեղեցիկ»¹⁰ դյույաղներգական պոեմը: Վերջինս ինչպես ինքնատիկայի ու դաստիարակական ուղղվածության, այնպես էլ ժանրային առանձնահատկությունների տեսակետից նորություն էր հայ մանկական պոեզիայում:

Աղայանը արտահայտչական բազմապիսի ձևերով է հարստացնում մանկական պոեզիան: Մանկական մի շարք բանաստեղծություններ նրա կողմից մատուցվում են խաղերի («Տիկնիկին», «Ասամբ փոխած» և այլն), խմբերգերի, հանելուկների ձևերով: Ենություն նկարագրություններ նվիրված այս կամ այն պատկերի մեջ հեղինակը ներդնում է որևէ հույզ, կենսախինդ տրամադրություն («Առ Արեհես և այլն»): Մանկական բանաստեղծության լեզուն նա մոտեցնում է խոսակցական լեզվին, տալիս նրան երաժշտական հնչեղություն: Աղայանը մանուկներին ուղղված բանաստեղծական խոսքը ազատագրում է նախկինում սահմանված դոգմատիկ կանոններից, հաղորդելով նրան ժողովրդական լեզվի հարստությունն ու պարզությունը:

Տիրառն նազարյանը բարձր ղեհահատելով հայ մանուկներին Աղայանի մատուցած ծառայությունները, նրա 40-ամյա հորեյանի առթիվ գրում է. «...Հրեմվանոք ողջունում եմ քառասուն-ամյա հրաշափառ գրական գործունեությունը... Խեղակից եմ այսօրվա քո, թեև խաչընդոտներով, արգելքներով շղթայված, հաղթական տոնին...»

Զե՛ որ Աղայան, քո ամենաընտիր զոհարները «Աղբյուրի» մեջ են սփռված և նրա անվիճելի պարծանքն ու անգնահատելի գանձերն են»¹¹:

«Աղբյուրի» լույս ընծայման առաջին տարիներին Ալեքսանդր Մատուրյանը և Նար-Դոսր ասվորում էին Թիֆլիսի արհեստագիտական ուսումնարանում: Նրանք մեծ սիրով աշխատակցում են ամսագրին: Մատուրյանը զպրոցի ուսուցիչ լեզվի դասատու, ամսագրի պատասխանատու քարտուղար Գարրիկ Միրզոյանի հանձնարարությամբ ամսագրի համար թարգմանում է ուսու մանկական գրողների պատմվածքները, Նար-Դոսր «Աղբյուր»-ում է տպագրում իր գրական առաջին փորձը՝ «Նալը» բանաստեղծությունը, ինչպես և թարգմանական մի քանի ոտանավորներ «Մ. Հ.» ստորագրությամբ և փոքրիկ դրույցներ («Ինչո՞ւ այդպես արավ», «Աստված ու Բազալորը»): Հետագայում Ալեքսանդր Մատուրյանը «Աղբյուրում» տպագրում է ինչպես մանկական, այնպես էլ մեծահասակներին ուղղված իր բանաստեղծությունները: Նրա մանկական բանաստեղծությունները համակում են մանուկներին ջերմ սիրով հանդես մայրը («Որբիկ», «Մոր գերեզմանի վրա» և այլն), հանդես դիրն ու գրականությունը («Գիր» և այլն): Խմբագրի միջոցով մանկական գրական անդամատանը Մատուրյանը հարստացնում է Շիրիկի, Լերմոստովի, Պուշկինի, Պլեչևեի, Կուլյովի և մյուսների ստեղծագործություններից կատարած թարգմանություններով:

Զուգակն թվականներին, երբ տարագիր հայերի հոծ խմբեր Սուլթան Համիդի վայրագ բռնություններից մազապուրծ, դիմում են Ռուսաստան, ապաստան գտնում Թիֆլիսում և այլուր, պանդխտության թեման գերակշռող է դառնում ամսագրի էջերում: Աթաբեկ Խնկոյանը, Շուշանիկ Կուրդիյանը, Աղամ Արեշատյան-Սարգսյանը, Կոստանդին Մելիք-Շահնազարյանը և ուրիշներ մանուկներին հասցեագրած բանաստեղծություններով ծանոթացնում են ընթերցողին հայ պանդխտի կյանքի տխուր պատմությանը:

⁸ «Աղբյուր», 1884, № 2, էջ 58—60:

⁹ «Աղբյուր», 1886, № 12, էջ 419—420:

¹⁰ «Աղբյուր», 1888, № 4, էջ 104—118, № 4, էջ 161—170, № 5—6, էջ 228—241:

¹¹ «Տարազ», 1911, № 5—6, էջ 3—4:

Ղարիր շինականի հոգևորական, հույզը, տրամադրությունը կապելով բնության զոդտրիկ տեսարանների նկարագրության հետ, Խաչակյանը պատկեր-զգացմունքներով և հարստացնում «Աղբյուրի» պոեզիան («Գիշերն եկավ», «Աշուղի իաղերը» և այլն)։ Նա բանաստեղծությանը հաղորդում է լիրիկական շունչ և ոգի, դրանով իսկ մանուկներին ու պատանիներին պահպանել տալիս պատկերավոր խոսքի գեղարվեստական հմայքը, հմայք, որ միաժամանակ նուրբ ու քնքուշ զգացումներ է առաջացնում մանուկների հոգում, խորացնում նրանց մոտ հայրենիքի և ժողովրդի նկատմամբ տաժաժ սիրո և ակնածանքի զգացումները։

Ռեակցիայի ծանր տարիներին (1907—1909), երբ ցարական դարսնական կոմիտեի կողմից արգելվում են ազատասիրական երգերը, իսկ պաշտոնական մանկավարժության ներկայացուցիչների կողմից սահմանափակվում է մանկական գրքերի թեմատիկան, «Աղբյուրը» խիզախ դորժ է կատարում՝ տպագրելով ազատամիտ գաղափարներ սերմանող, ազատաշունչ ոգով զրված երգեր հայ պատանիների համար (Միքայել Նալբանդյանի «Երգ ազատության»¹² և այլն)։

Ամսագրում մանուկների գեղարվեստական ընթերցանության համար հետաքրքիր նյութ է ներկայացնում հատկապես Պերճ Պողոսյանի «Տարվա ամիսները»¹³ պատմածաշարը։ Այն տարվա ամիսների սոսկ նկարագրությունը չէ, այլ յուրաքանչյուր եղանակի, յուրաքանչյուր ամսվա հետ կապված հայ ժողովրդի սպասելիքների, վառ երազանքների, սոցիալական թշվառ իրավիճակի, կենցաղի, սովորությունների վառ արտահայտություն։

Մի շարք հեղինակներ անդրադառնալով գյուղական կյանքի թշվառությանը, նշավակում են գյուղի տերերին՝ բեգերին ու ամիրաներին։ Այսպես, օրինակ, Ջալալ Տեր-Գրիգորյանը իր «Գյուղի մանուկը» պատմվածքում պատանի Մուքու աշխատանքային դառն կյանքի պատմությունն է անում, արտահայտելով այն միտքը, որ Մուքուն ու նրա նմաններին դժբախտություն պատճառողները գյուղի բեգերն են, աղաները։ Մի շարք պատմվածքների նյութը վերցված է այլ ժողովուրդների անկախության, ազատության համար մղած պայքարից։ Հերոսները քաջ ու անձնազոհ պատանիներ են, որոնք պայքարում են իրենց հայրենիքի անկախության համար։ Նեզր ստրուկ պատանին համառ պայքարի զնով ազատություն է ձեռք բերում («Ազատված գերին»), Աֆրիկայում ստրուկները պայքարում են ազգային իրավունքների ձեռք բերման համար («Մարդասեր») և այլն։ Ճանաչողական արժեքի հետ միասին այդ զրվածքները ունեն նաև դաստիարակչական մեծ նշանակություն։

Մանկական չափածո և արձակ գործերի հիմնական թեմաներից մեկն է դառնում բանվորական կյանքը։ Հովակիմ Սողոմյանի «Պրուետարիատի տոներ» պատմվածքում մանուկ ընթերցողի ուշադրությունը հրավիրվում է բանվոր դասակարգի կյանքի վրա։ «Տեսած ես, իհարկե, սիրելի Ռուբեն, մշակին, բանվորին,—գրում է հեղինակը,—այդ շարքաշ բախտի խորթ զավակին։ Բայց դարձրե՞լ ես քո ուշադրությունը դրա վրա. դադրեցրե՞լ ես քո միտքը այդ մարդկանց վրա։ Գիտեմ, որ քեզ կհաղթեմ. ես պիտի քո ուշադրությունը հրավիրեմ այդ մարդկանց, այդ շքավոր բանվորների վրա, կամ ինչպես եվրոպական բառով դրան անվանում են՝ պրուետարիատի վրա»¹⁴։ Հատկանշական է և այն, որ հայ ժողովրդի փրկության հույսը կապվում էր ոչ ուս ժողովրդի հետ։ Ռուսահայաստանից զնացած կամավորական զորքերն են ազատում հայ գյուղացիներին («Արդար վրեժը»), Ռուսահայաստանում են միայն հյուրընկալորեն ընդունում թուրքական յաթաղանից մազապուրծ հայ գաղթական խմբերին («Գաղթական») և այլն։ Բանաստեղծությունների, պատմվածքների, նովելների հետ միասին ամսագրում մեծ տեղ են դրավում նաև ժողովրդական հեքիաթները, դրույցները, լեգենդները։

«Աղբյուրի» և ընդհանրապես ժամանակի առաջադեմ մտավորականության ներկայացուցիչների կողմից դաստիարակչական մեծ դեր և նշանակություն էր տրվում հեքիաթներին։ Հովհաննես Տեր-Միքայելյանը, Տիգրան Ռաշմաճյանը մշակում էին տեսական դրույթներ հեքիաթի ժանրի դարգացման համար։ «Ժողովրդական հեքիաթները, առակները,—գրված է ամսագրում,—դարգացնում են այն սերտ կապը, որ կա մանուկների ներքին կյանքի մեջ և իր ժողովրդի մեջ, միմիայն այս ճանապարհով մանուկի դարգացումն ընթանում է իր բնական ճանապարհով»։

Ընդհանրապես, XIX դ. վերջին և XX դ. սկզբին գրական մյուս ժանրերի հետ միասին դարդանում էր և հեքիաթի ժանրը։ Հանձին «Աղբյուր» ամսագրի, հայ մատաղ սերնդին, որպես ընթերցանության լավագույն նյութ, մատուցվում էին ինչպես թարգմանական, այնպես էլ

¹² «Աղբյուր», 1909, № 11, էջ 206—207։

¹³ «Աղբյուր», 1892, 1—12 համարներ։

¹⁴ «Աղբյուր», 1907, № 3, էջ 143։

ազդային ժողովրդական հերթաթները, Անդրադառնալով «Աղբյուր» ամսագրի դերի գնահատմանը հերթաթի ժանրի տարածման գործում, «Մուրճ» ամսագիրը գրում էր. «Հերթաթները ունենալով մանկական պատմության բոլոր գլխավոր առանձնահատկությունները՝ պարզություն ու հարուստ բանաստեղծություն, բարոյական հանդամանքներ, հրահանգիչ բովանդակություն, մնայուն արժեք և ձգտումների ու իդեալների միություն, նույնպես հարմար են, Այս հանդամանքն է, որ նկատի է ունեցել «Աղբյուրը» և առաջին հերթին մեծ տեղ տվել հերթաթներին. Ճիշտ է, ավելի մոտ ու հարազատ կլինեին հայ մանկանը հայկական ժողովրդական հերթաթները, սակայն դրանք թվով քիչ էին, ուստի ամսագիրը օգտագործել է նվրոպական և ռուսական հերթաթները»¹⁵:

Հայ մանուկների համար «Աղբյուրում» հերթաթներ էին տպագրում Ղազարոս Աղայանը, Վրթանես Փափազյանը, Աթաբեկ Խնկոյանը, Ասրուկտը, Մարտիրոս Ղահրամանյանը, Լեոն (Առաքել Բարախանյան), Երվանդ Մովսիսյանը և ուրիշներ:

«Աղբյուրում» են առաջին անգամ տպագրվում Ղազարոս Աղայանի գրեթե բոլոր հերթաթները («Օձամանուկ և Արևհատ», «Արեգնազան կամ կախարդական աշխարհ», «Ջանգի-Ջրանգի» և այլն): Աղայանի հերթաթները սերմանում են մանուկների ու պատանիների մեջ բարոյական բարձր հատկանիշներ՝ քաջություն, անվեհերություն, աշխատասիրություն, անձնագոհություն, համարձակություն, հերոսականություն, հայրենասիրություն և ամենակարևորը՝ մարդկայնություն ու մարդասիրություն: Հասարակ, արհեստավոր խավի մարդիկ աշխատասեր են, հողով արի, ընդունակ, քաջ ու անվեհեր («Օձամանուկ և Արևհատ», «Քիչ էլ, քիչ էլ...», «Հնարաղետ չուհակը» և այլն): Ժամանակին մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաբյանը Աղայանին նմանեցնելով դանիացի հռչակավոր հերթաթագիր Անդերսենին, միանգամայն իրավացիորեն գրում է. «Գեղեցիկ նյութեր ամբարված են գլխավորապես «Աղբյուրի» մեջ, մանավանդ հայ Անդերսենի՝ Աղայանի շնորհիվ...»:

Մեծ է Ղազարոս Աղայանի հերթաթների ինչպես ձանաչողական ու դաստիարակչական, այնպես էլ գեղադիտական արժեքը: Նրա ստեղծած պատկերները, կերպարները տպավորիչ են, հրաշապատում ձևը՝ ներգործուն: Նրա հերթաթները հայ մանուկների մեջ պարզացնում են գեղարվեստը ըմբռնելու և հասկանալու ճաշակ: «Առհասարակ Պ. Աղայանցի հերթաթները, — գրում է Գ. Միրզոյանը, — անչափ գեղարվեստական են, որ ես խորհուրդ կտայի մեր դաստիարակներին՝ հայ մանուկների մեջ գեղարվեստական ճաշակ զարգացնելու միջոցներից մեկը այդ հերթաթները համարել ու գործ դնել»¹⁶:

Ժողովուրդը դարեր շարունակ երազել է հարստահարիչներից իրեն ազատ տեսնելու մասին, հաճախ է ըմբոստացել կյանքի տերերի, վաշխառու խավի կամայականությունների դեմ: Այդ մասին է մանուկներին ու պատանիներին պատմում Վրթանես Փափազյանը իր «Անկեղծ ընծա» գրույցում:

Սոցիալական կյանքի անարդարությունները առավել խտացված գույներով են պատկերվում լեզենդներում, ավանդություններում, առասպելներում: Մի շարք լեզենդներ («Կարսի բերդի հիմնարկությունը», «Մի տխրալի ավանդություն» և այլն) ծանոթացնում էին մանուկներին ճորտատիրական հասարակությունում ճորտատերերի կատարած ոճրագործություններին, ցույց տալիս նրանց անմարդկային վերաբերմունքը ճորտ գյուղացիների նկատմամբ:

Հերթաթների, ավանդությունների, լեզենդների հետ միասին ամսագրում մեծ տեղ են զբաղեցնում առակները, որոնցում որպես գործող անձինք հանդես են բերված կենդանիները: Նրանք մարդկային լեզվով խոսում են, խրախուսում լավը, բարին, գեղեցիկը, նշավակում չարը, վատը, անազնիվը: Բարոյախրատական իմաստը բխեցնելով գեղեցիկի ու գեղեցիկի նկարագրություններից, առակներում ցույց են տրվում, որ լավ հատկանիշներ չեն խաբերայությունը, խորամանկությունը, ով փորձի խաբել, կամ ուստ խոսել կկործանի ինչպես ուրիշների, այնպես էլ իր կյանքը («Ազնիվ ընկեր», «Բյուրեղացություն» և այլն): Մի շարք առակներում սովորեցվում է ոչ թե հուսահատության կատարել կեղեքիչների, հարստահարիչների կամքը, այլ «խայթոցով» պատասխանել նրանց («Մեղուն և արջը» և այլն), կամ ցույց է տրվում, որ կյանքում հաղթանակում և հաջողությունների է հասնում նա, ով համեստ է ու համբերատար («Ճշմարիտ արծառնավորը» և այլն):

Մանուկների համար ընթերցանությունը հետաքրքիր նյութ է նաև «Աղբյուր»-ում տպագրված ոտրինդոնյան պատմությունները: Ռոբինզոնյան պատմություններում հերոսները ոչ թե կա-

¹⁵ «Մուրճ», 1895, № 3, էջ 278:

¹⁶ «Աղբյուր», 1883, № 3, «Բ» բաժին, էջ 26:

խարդական, այլ սովորական մարդիկ են, որոնք իրենց վարքագծով վարակում են մանուկներին: Այդ տեսակետից արժեքավոր է Փիլիպոս Վարդանյանի «Ռորինդոն» վերնադրով դորժը: Այն 'Իանիել Դեֆոյի «Ռորինդոն Կրուզո» վեպի ուղղակի թարգմանությունը չէ: Այնտեղ հեղինակը համառոտակի նկարագրում է Ռորինդոնի կյանքը: Այն կարելի է համարել ուրինդոնադ, որը ինչպես բոլոր ուրինդոնադները, ստեղծվել է վեպի հարավեպից: Ռորինդոնի պատմությունը որպես մանկական ընթերցանության լավագույն նյութ խրախուսվել է ժամանակի առաջադեմ մտավորականության կողմից: Հովհաննես Տեր-Միրաքյանը այդ առիթով գրում է. «Ոչ մի ժողովրդական դիրք, բացի Ռորինդոնից, չէ կարողացել մարդկային աշխատանքի էությունը, նրա արդյունքներն այնպես կրթիչ կերպով ներկայացնել. ոչ մի դիրք, բացի Ռորինդոնից, չէ կարողացել այնպես ակներև, այնպիսի շոշափելի կերպով յուրաքանչյուր քայլափոխում ցույց տալ մանկանը, որ մարդու ամեն մի առաջադիմական քայլը նրա առանձին մտածողության ու դործունեության արդյունքն է եղել և ոչ մի դիրք ալելի կենդանի կերպով չի ներկայացրել մարդկության թափառ աներևակայելի ճիգը մի ամենահասարակ դործիք հնարելու և նամանավանդ մի արհեստ կազմակերպելու համար»¹⁷:

Մանկա-պատանեկան դրականության մեջ առանձին ժանր է կալվում դիտա-ղեղարվեստական ակնարկը, որն իր սկզբնավորումն ու զարգացումն է ստանում «Աղբյուր» ամսագրի էջերում:

Եթե հերթափներում մարդկային փոխհարաբերությունների զարգացման ընթացքը բացատրվում էր որպես ղերբնական ուժերի միջնորդության արդյունք, իսկ ուրինդոնադներում ցույց էր տրվում, որ մարդու յուրաքանչյուր քայլը նրա մտածողության և դործունեության արդասիքն է, ապա դիտա-ղեղարվեստական ակնարկներում տրվում են ինչպես մարդկային հասարակության, այնպես էլ բնության երևույթների դիտական բացատրությունները՝ պարուրված գեղարվեստական ձևերի մեջ:

Գիտական հանրամատչելի ակնարկներ հայ մանուկների համար գրվել են վաղ շրջանից: Հայ մանկա-պատանեկան մամուլի առաջին օրդաններում («Բուրսատան», «Թուֆակ հայկադյան», «Թատրոն բարեկամ մանկանց», «Բուրսատան մանկասեց» և այլն) տպագրվել են ակնարկներ, որոնք դիտության տարբեր բնագավառների վերաբերյալ տարրական դիտելիքներ են հաղորդել մանուկներին: Սակայն այդ նյութերը հեռու են եղել գեղարվեստական լինելուց:

Սկսած անցյալ դարի 90-ական թվականներից նորագույն մանկավարժության ներկայացուցիչները պահանջում էին դիտական հարցերը գեղարվեստական ձևերի մեջ պարուրած արտահայտելու հմտություն, գեղագետի շնորհք և ունակություն, ինչպես և մանուկների հոգեբանությունը ճանաչելու, նրա հոգևոր պահանջները բավարարելու կարողություն:

«Աղբյուր» ամսագիրը չէր կարող չեղվել դաստիարակության այդ միակ ճշմարիտ ու բնական ուղուց: «Մեր ժամանակի մեծ հեղինակություն ունեցող փիլիսոփա-մանկավարժները, — գրված էր ամսագրում, — շատ լավ են հասկացել լոկ վերացական, դրականական դաստիարակության տված վնասները և այս պատճառով նրանք, որպես ամենակարևոր և օգտակար դաստիարակության ուղղություն, ճանաչում են բնագիտական դաստիարակությունը՝ միացած նաև բանաստեղծական դաստիարակության հետ»¹⁸:

Ամսագրում տպագրվում էին բնության և մարդկային հասարակության զարգացման օրենքները լուսարանող ակնարկներ, որոնք ունեին պատկերավոր ոճ, կուռ և միասնական շարադրանք, մատչելի և պարզ լեզու:

Խմբագրության կողմից պահանջվում էր, որ դիտա-ղեղարվեստական ակնարկներ մանուկների համար գրեն ոչ թե «մասնագիտությունից զուրկ կցկցանք անողներն ու փոխադրիչները», այլ «գիտության իսկական ներկայացուցիչները»: Ով ամսագրում տպագրվում էին մեծ մասամբ գիտության այս կամ այն բնագավառում մասնագիտացված հեղինակների՝ Վ. Լուսկեիչի, Բողդանովի (բնագետներ), Կ. Մելիք-Շահնաղարյանի (դյուրատեսես), Ն. Տեր-Ավետիքյանի, Ա. Բարախանյանի (պատմաբաններ), Ա. Շխեյանի (բժիշկ) և ուրիշների հանրամատչելի դիտա-ղեղարվեստական ակնարկները: Իրանք բովանդակությամբ, մատուցման ձևերով մատչելի էին մանուկներին: Նոր-նոր շրջապատը ճանաչող երեխայի համար ուսուցողական և ճանաչողական մեծ արժեք ունեին «Մերատ հորեղբոր դրույցները», «Սլաքների վեճը», «Արագիլ», «Կարապ» և շատ ու շատ այլ ակնարկներ: Կամաց-կամաց ընդլայնվում է երեխայի հետաքրքրությունների շրջանակը: Նա ուղում է իմանալ ալելին, ճանաչել բնության երևույթների մեջ

17 «Մուրճ», 1898, № 10—11, էջ 1495:

18 «Աղբյուր», 1890, № 1, «Ո» բաժին, էջ 21:

թաքնված օրենքները, նա դառնում է հարցասեր։ Նրա մտավոր պահանջները բավարարելու համար «Աղբյուրը» տպագրում էր բնության պարզացման օրինաչափությունները լուսաբանող ակնարկներ՝ գրված մանուկներին հասկանալի պարզ լեզվով։ Դրանով իսկ, հանձին մանուկների ամսագրի, իրականացվում էր նորադույն մանկավարժության այն պահանջը, ըստ որի երեխան պետք է դաստիարակվեր ոչ միայն դասական գրականություն կարդալով, ոչ միայն զանազան ուտանավորներ ու պատմություններ անդիր սերտելով, այլև «բնության մեջ կատարվող երևույթները դիտելով, իր շրջապատի կենդանի բնության հարստություններն ուսումնասիրելով, օդի, ջրի, հողի և բույսերի ու կենդանիների հետ ծանոթանալով»։

Մանուկների համար բնության երևույթների դիտական բացատրությունների շուրջ հանրամատչելի և հետաքրքիր ակնարկներ էին գրում Կոստանդին Մելիք-Շահնազարյանը («Թե բույսերը ինչպես են ճանապարհորդում»), Զալալ Տեր-Դրիգորյանը («Բույսերի ձմեռվա քունը») և ուրիշներ։

Կոստանդին Մելիք-Շահնազարյանը որպես նյութի մատուցման լավագույն միջոց օգտագործում էր հարց ու պատասխանի ձևը։ Հեղինակը հանդես գալով ծերուկ այգեպանի կամ ծաղկարույծի դերում, պարզ ու անմիջական լեզվով պատասխանում է մանկան հարցերին, հաղորդելով նրան այն ամենը, ինչ ճշմարտություն էր և փորձով ապացուցված։

Նյութը պատկերավոր ձևով մատուցելու, դյուրամիտների դարձնելու համար հեղինակների կողմից օգտագործվում էր իրերի ու երևույթների անձնավորման եղանակը։ Կենդանին, կամ բույսը մարդկային լեզվով պատմում են իրենց ծաղման, պարզացման մասին («Յողիկի ճանապարհորդությունը» և այլն)։ Ընդհանրապես անտրոպոմորֆիզմը որպես նյութի մատուցման պատկերավոր ձև, օգտագործվում էր «Աղբյուրի» դիտա-գեղարվեստական ակնարկներում։

Մարդկային հասարակության պատմության, հայ և ուրիշ ժողովուրդների կյանքի ու կենցաղի, նրանց պեղված տեղավայրերի, աշխարհագրական դիրքի, բնա-կլիմայական պայմանների մասին համապատասխան դիտելիքներ են հաղորդում ամսագրի պատմա-աշխարհագրական, ճանապարհորդական, կենսագրական ակնարկները։ Նման բնույթի ակնարկներն ընդհանրապես խրախուսվում էին ժամանակի առաջադիմ մտավորականության և պարբերական մամուլի կողմից։ Այսպես, օրինակ, «Աղբյուրում» տպագրված Բաֆֆու «Ջրաբերդը» ակնարկի կապակցությամբ «Մշակ» թերթում գրված էր. «Ճանապարհորդական գրվածքները միշտ պիտի օգտակար լինեն ոչ միայն երեխաների, այլև ամեն դասակարգի մարդկանց համար։ Եվ «Ջրաբերդը» հողվածը վերցրած Պ. Բաֆֆի ճանապարհորդությունից չարաբաղում, իսկապես գեղեցիկ և գրավիչ է։ Հարգելի հեղինակի ոճը նրբության և գեղարվեստի կողմից ուրիշ ոչինչ սպասելի տեղ չէ թողնում։ Ընթերցողը նրա հետ զնում է, պտտում է նրա հետ, տեսնում է ամեն ինչը, և հոգեպես տրամադրվում է այնպես, ինչպես և է ճանապարհորդը»¹⁹։

Հետաքրքրական է առանձնապես Նիկողայոս Տեր-Ավետիսյանի «Տեղագրական նամականի» ակնարկաշարը՝ տպագրված ամսագրի 1887—1918 թվականների համարներում։ Այն Հայաստանի տարբեր վայրերի աշխարհագրական դիրքի, բնա-կլիմայական պայմանների մասին համապատասխան տեղեկություններ հաղորդելու հետ միասին, մանուկներին ծանոթացնում է յուրաքանչյուր տեղավայրի բնակիչների սովորույթներին, ապրելակերպին, սոցիալ-կենցաղային իրավիճակին։ Նյութը շարադրված է պատկերավոր լեզվով։ Մերթ ինքը՝ հեղինակն է պատմում, մերթ հերոսը՝ այս կամ այն վայրում կատարած շրջագայությունից ստացած տպավորությունների մասին։

Մեծ տեղ էին զբաղում և պատմա-կենսագրական ակնարկները՝ գրված գիտության, հասարակական կյանքի տարբեր բնագավառներում աչքի բնկած մարդկանց գործունեության մասին («Գալիլեո Գալիլեյ», «Կոլումբոս», «Նաթան Հալլ», «Մարտին Լութեր», «Վիլհելմ Թեյլ» և այլն)։

Օրվա հարց էր դարձել և հայ գործիչների կյանքի լուսաբանման պահանջը։ Այդ առթիվ Հովհաննես Տեր-Միքայելյանը գրում է. «Մեր նշանավոր գործիչներն էլ կարող են օրինակել լինել, նրանց կյանքը հարկավորված է լինում ասիական աներևակայելի խռընդոտների դեմ մաքառելով զգալի արդյունք առաջացնելու։ Նրանց բնավորության ուժն ու բարերար կյանքը կարող են ազդել դեռահասի ներքին աշխարհի վրա»²⁰։ Եվ առաջին անգամ հայ մանուկների համար ամսագրում տպագրվում են գրողներ Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Պերճ Պոռչյանի, Մերենցի, հրապարակախոս Գրիգոր Արծրունու, հասարակական գործիչ Խրիմ-

19 «Մշակ», 1884, № 18, էջ 1։

20 «Մուրճ», 1893, № 2, էջ 222։

յան հայրիկի, մանկավարժ Առաքել Բահաթրյանի, պատմաբաններ Հեռյի, Ալեքսանդր Նրիցյանի, երաժշտագետ Կարա-Մուրզայի և մյուսների կյանքի ու գործունեության վերաբերյալ պարզ ու մատչելի լեզվով գրված համառոտ ակնարկներ:

Մանուկների ու պատանիների մտավոր կրթության մակարդակը թերի կարող էր մնալ, եթե նրանք չունենային տարրական գիտելիքներ կենցաղային ամենագործածական իրերի կառուցվածքի, սննդի բաղադրության, առողջապահական կանոնների և այլնի մասին: Այս հարցի շուրջ ժամանակի պարբերական մամուլի էջերում ելույթներ էին ունենում նորագույն մանկավարժության ներկայացուցիչները: Հովհաննես Տեր-Միրաքյանը «Մուրճ» ամսագրում գրում է. «Ինչ վերաբերում է արվեստներին, մեր ոչ մանկական, և ոչ էլ ժողովրդական գրականությունը նրանց մասին զաղափար չի տվել: Մինչդեռ, ինչպես այլ առիթով տեսանք, նրանք քաղաքակրթության շոշափելի տարրեր լինելով անտես չպետք է առնվեն: Շատ թերի կլինեն մեր աշխարհայացքը, եթե զաղափար չունենայինք զոնե ամենագործածական ու հետաքրքրական արտադրությունների մասին»²¹:

«Աղբյուր» ձգտում էր իրականացնել նորագույն մանկավարժության այդ պահանջը ևս, տպագրելով առօրյա գործածական իրերի կազմության, նյութերի բաղադրության մասին զեղարվեստական պատկերավոր լեզվով շարադրված հանրամատչելի ակնարկներ («Ջուր», «Ինչպես շինել արհեստական մազնիսը», «Սառնեցրած կաթ», «Օղի լյարեխառնությունը քաղաքներում» և այլն):

Բովանդակության, կառուցվածքի, արտահայտչական ձևերի տեսակետից այդ բոլոր ակնարկները ևս չէին մնում գրական-զեղարվեստական ստեղծագործություններից: Իրանց հատուկ էին լեզվի պարզությունը, կոնկրետությունը, անաղարտությունը, մտքի պատկերավոր արտահայտությունը, մանուկների հոգեբանության ճշմարտացի արտացոլումը:

«Աղբյուր» ամսագիրը սկիզբ դնելով գիտա-զեղարվեստական ակնարկի զարգացմանը, մի նոր ժանրով ևս հարստացրեց հայ մանկա-պատանեկան գրականությունը:

Այսպիսով, այնպիսի ժամանակներում և պայմաններում, երբ պաշտոնական մանկավարժության ներկայացուցիչները և մի շարք գրական գործիչներ մանկական գրվածքին վերագրում էին միայն բարոյա-խրատական դեր և փորձում էին մանկական գրականությունը անջատել ընդհանուր գրականությունից, «Աղբյուր» ամսագրի կողմից վերացվում է այն սահմանը, որով տարբերություն է գրվում ընդհանուր գրականության և մանկական գրականության թեմատիկայի և զեղարվեստական շախանիշների միջև:

Ստեղծելով թեմատիկայի, զեղարվեստական առանձնահատկությունների և դաստիարակչական ուղղվածության տեսակետից ընթերցանության հետաքրքիր ու մատչելի նյութ մանուկների և պատանիների համար, «Աղբյուրը» զարգացման մի նոր աստիճանի վրա է բարձրացնում հայ մանկա-պատանեկան գրականությունը, որով և նշանավորում է իր դերն ու տեղը հայ մանկական գրականության և մանկա-պատանեկան մամուլի պատմության մեջ:

²¹ «Մուրճ», 1899, № 2—3, էջ 232—233.